ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՓԱՍՏԱԲԱՆ ԷՐԻԿ ԱՐԱՄԻ ՄԿՐՏՉՅԱՆ
ԱՐՏՈՆԱԳԻՐ № 3614

հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Զորյան 89 շ., 22 բն., advocate.erikmkrtchyan@gmail.com, հեռ.՝ 095 700 115

Ե-413

11.07.2025թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՐՈՆ ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ

(ՀՀ, քաղաք Սպիտակ, Շահումյան 7)

Հարգելի՛ պարոն Նիկողոսյան,

Հայտնում եմ, որ լիազորագրի հիման վրա հանդիսանում եմ **Ազատ Արթուրի Ղուկասյանի** (նույնականացման քարտ՝ 012720314, տրված՝ 07.05.2020 թվականին 001-ի կողմից, ՀԾՀ՝ 2901930077, հաշվառման հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, Սպիտակ համայնք, քաղաք Սպիտակ, Այգեստան թաղամաս 121 տուն) ներկայացուցիչը:

ՀՀ, Լոռու մարզ, Սպիտակ համայնք, քաղաք Սպիտակ, Իտալական թաղամաս թիվ 06-006-0189-0005 կադաստրային ծածկագրով, 0.01 հա մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է <u>Արսեն Ազատի Ղուկասյանին</u> *(հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26122022-06-0051 վկայական):*

Արսեն Ազատի Ղուկասյանի սեփական սնանկության ճանաչման պահանջով «Կամավոր սնանկության մասին» դիմումը ՀՀ սնանկության դատարանը նախագահությամբ դատավոր պարոն Արմեն Խաչատրյանի թիվ ՍՆԴ/2771/04/23 սնանկության գործով վարույթ է ընդունել 07.09.2023 թվականին:

Դիմումը վարույթ ընդունելու մասին Դատարանի 07.09.2023 թվականի որոշումը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով ուղարկվել է վերոնշյալ հոդվածում սահմանված բոլոր մարմիններին:

ՀՀ սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/2771/04/23 սնանկության գործով 18.09.2023 թվականի վճռով Արսեն Ազատի Ղուկասյանը ճանաչվել է սնանկ:

Դատարանի 18.09.2023 թվականի որոշմամբ Գևորգ Ավագյանը նշանակվել է Արսեն Ազատի Ղուկասյանի սնանկության գործով կառավարիչ:

Արսեն Ազատի Ղուկասյանին սնանկ ճանաչելու մասին տեղեկությունները Կառավարչի կողմից 04.10.2023 թվականին հրապարակվել է http://azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

Արսեն Ազատի Ղուկասյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանը կազմել է թիվ ՍՆԴ/2771/04/23 սնանկության գործով պահանջների նախնական ցուցակը՝ դրանում ընդգրկելով Բանկի 64,069,165 ՀՀ դրամի և ՊԵԿ 157,497 ՀՀ դրամի չապահովված («Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետ) պահանջները: Կառավարիչը պահանջների նախնական ցուցակը ներկայացրել է պարտապանին, պարտատերերին, այդ մասին 20.11.2023 թվականին հայտարարություն է հրապարակել http://azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և նախնական ցուցակի օրինակը 21.11.2023 թվականին ներկայացրել է Դատարան: Պահանջների նախնական ցուցակի և դրանում ընդգրկված պահանջների դեմ առարկություն չի ներկայացվել:

Դատարանի 11.12.2023 թվականի «Արսեն Ազատի Ղուկասյանի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը հաստատելու և պարտատերերի առաջին ժողով նշանակելու մասին» որոշմամբ հաստատվել է Արսեն Ազատի Ղուկասյանի պահանջների վերջնական ցուցակը՝ ըստ ցուցակում նշված առաջնահերթության և ապահովվածության.

1. «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ՝ 64,069,165 (վաթսունչորս միլիոն վաթսունինը հազար հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ, 82 հոդվածի 1-ին մասի «է» կետ – չապահովված,

2. ՀՀ Պետական եկամուտների կոմիտե՝ 157,497 (մեկ հարյուր հիսունյոթ հազար չորս հարյուր իննսունյոթ) ՀՀ դրամ, 82 հոդվածի 1-ին մասի «է» կետ – չապահովված:

Արսեն Ազատի Ղուկասյանի սնանկության գործով պարտատերերի առաջին ժողովը տեղի է ունեցել 2024 թվականի հունվարի 15-ին, ժամը 12:00-ին:

Դատարանի 30.07.2024 թվականի «Պարտապանին պատկանող գույքի վաճառքը թույլատրելու մասին» որոշմամբ Արսեն Ազատի Ղուկասյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանին «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածով և ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020 թվականի թիվ 116-Ն հրամանով սահմանված կարգով թույլատրվել է վաճառել հետևյալ գույքը.

(...) Լոտ 1՝ ՀՀ, Լոռու մարզի Սպիտակ համայնքում գտնվող թիվ 06-006-0189-0005 կադաստրային ծածկագրով հողամաս, մեկնարկային գինը՝ 280,000 (երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Դատարանի «Գույքն արգելանքից հանելու մասին» որոշմամբ վերացվել է ՀՀ, Լոռու մարզի Սպիտակ համայնքում գտնվող թիվ 06-006-0189-0005 կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ կիրառված բոլոր սահմանափակումները և արգելանքները: *Որոշումն ուժի մեջ է մտել կայացման պահից:*

01.07.2025 թվականին Արսեն Ազատի Ղուկասյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ստյոպայի Ավագյանի (այսուհետ նաև՝ Վաճառող) և Ազատ Արթուրի Ղուկասյանի (այսուհետ նաև՝ Գնորդ) միջև կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, համաձայն որի Վաճառողը վաճառեց, իսկ Գնորդը, որպես սեփականություն ձեռք բերեց՝ ՀՀ, Լոռու մարզ, Սպիտակ համայնք, քաղաք Սպիտակ, Իտալական թաղամաս հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը բաղկացած՝ 0.01 հա ընդհանուր մակերեսով հողամասից, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի (կադաստրային ծածկագիրը՝ 06-006-0189-0005), այսուհետ՝ անշարժ գույք: ***<u>Գրանցված է գրանցամատյանում թիվ 8492</u>:***

Ելնելով վերոգրյալից 05.07.2025 թվականին թիվ Ե-386 գրությամբ դիմել եմ ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանին **խնդրելով ՀՀ, Լոռու մարզ, Սպիտակ համայնք, քաղաք Սպիտակ, Իտաական թաղամաս հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքի, բաղկացած՝ 0.01 հա ընդհանուր մակերեսով հողամասից, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի (կադաստրային ծածկագիրը՝ 06-006-0189-0005) նկատմամբ կատարել Ազատ Արթուրի Ղուկասյանի անվամբ իրավունքների պետական գրանցում:**

ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 11.07.2025 թվականին տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-11072025-06-0117 որոշման համաձայն՝ **դիմումի հիման վրա վերը նշված անշարժ գույքի նկատմամբ հարուցված իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքերով, քանի որ՝ Գույքի նկատմամբ որևէ հիմքով սեփականության իրավունքի նոր պետական գրանցում կկատարվի ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման**

պահանջների համաձայն հասցեի վերաբերյալ համապատասխան որոշում (նոր փոստային հասցե) ներկայացնելու դեպքում:

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ ՀՀ, Լոռու մարզ, Սպիտակ համայնք, քաղաք Սպիտակ, Իտալական թաղամաս թիվ 06-006-0189-0005 կադաստրային ծածկագրով, 0.01 հա մակերեսով հողամասի <u>վերաբերյալ կայացնել հասցեավորման և համարակալման մասին համապատասխան որոշում</u>:

Առդիր՝ Ազատ Արթուրի Ղուկասյանի նույնականացման քարտի սկանավորված տարբերակը՝ ‹‹1›› էջից, Ազատ Արթուրի Ղուկասյանի կողմից տրված լիազորագրի սկանավորված տարբերակը՝ ‹‹2›› էջից, փաստաբանի արտոնագրի և նույնականացման քարտի սկանավորված տարբերակը՝ ‹‹1›› էջից, ՀՀ սնանկության դատարանի «Պարտապանին պատկանող գույքի վաճառքը թույլատրելու մասին» որոշման սկանավորված տարբերակը՝ ‹‹3›› էջից, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի սկանավորված տարբերակը՝ ‹‹2›› էջից, փաստաբանի 05.07.2025 թվականի թիվ Ե-386 գրությունը՝ ‹‹4›› էջից, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 11.07.2025 թվականին տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-11072025-06-0117 որոշումը՝ ‹‹1›› էջից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՓԱՍՏԱԲԱՆ **ԷՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ**